ՊԱՐԳԵՎ ՕՀԱՆՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու

ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ («ՊՐՈԲԱՑԻԱ»)

Սույն գիտական հոդվածում հեղինակը, անդրադարձ է կատարել Պրոբացիոն ծառայությանը, օրենսդրական և Պրոբացիայի ծառայության հիմնախնդիրներին, վերլուծել և վեր հանել առկա խնդիրները, օրենսդրական բացերը ու իրավակիրառ պրակտիկայում առկա Պրոբացիայի ծառայության համապատասխան տեխնիկական ոչ լիարժեք հագեցվածությունը՝ կապված, հատկապես, կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոցների ներդրման ու կիրառության, ինչպես նաև նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նկատմամբ վերահսկողության առավել արդյունավետ իրականացման հետ:

Հոդվածում նկարագրվում է Պրոբացիայի ծառայության ստեղծման անհրաժեշտությունը, վերջինիս անհրաժեշտ լիազորությունների և գործառույթների շրջանակը, ինչպիսիք են՝ դատապարտյալի սոցիալ-հոգեբանական բնութագրի վերաբերյալ եզրակացության ներկայացումը, մինչդատական փուլում՝ մինչդատական զեկույցի պատրաստումը, և կալանավորմանն այլընտրանք խափանման միջոցներից՝ տնային կալանքի և հսկողության իրականացումը, դատական փուլում՝ մինչև պատժի նշանակումը զեկույցի տրամադրումն ու մեղիացիան և այլն:

Հիմնաբառերը *- պրոբացիա, պրոբացիայի ծառայություն, պատիժը պայմանականորեն չկիրառել, մինչդատական զեկույցի պատրաստում, այլընտրանք խափանման միջոց, տնային կալանք, հսկողության իրականացում, զեկույց, մեղիացիա:*

Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում ՀՀ ԱՆ Պրոբացիայի ծառայությունն իրականացնում է անձի անհատական հաշվառում, փորձաշրջանի ընթացքում համապատասխան ծառայությունների կամ հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ վերահսկողություն է իրականացնում այդ անձի կողմից հասարակական կարգը պահպանելու և դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելու նկատմամբ:

Պայմանականորեն դատապարտված կամ պատժի կրումից վաղաժամկետ ազատված դատապարտյալների նկատմամբ վերահսկողության վերաբերյալ 1964թ.-ի Եվրոպական կոնվենցիան նախատեսել է հետևյալ նվազագույն պահանջները, որոնք կարող են դրվել դատապարտյալի վրա պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում.

ա. համապատասխան պետական մարմիններին հաղորդել բնակության կամ աշխատավայրի ցանկացած փոփոխության մասին.

բ. զերծ մնալ որոշակի վայրեր կամ տարածքներ մուտք գործելուց.

գ. չլքել պետության տարածքը.

դ. հետևել նախատեսված ապրելակերպի, կեցության և կրթության պահանջներին.

ե. սահմանված ժամկետում ներկայանալ համապատասխան պետական մարմիններին.

զ. խուսափել որոշակի անձանց հետ շփումներից.

է. փոխհատուցել հանցագործությամբ պատճառված վնասը.

ը. իրականացնել հանրային աշխատանքներ.

թ. համագործակցել համապատասխան սոցիալական ծառայողի հետ.

ժ. անցնել որոշակի հիվանդությունից բուժման կուրս:

Վերոգրյալ պարտականությունների ցանկը սպառիչ չէ, և ԵԽ անդամ պետությունների դատարանների կողմից կարող են նախատեսվել դատապարտյալի ուղղմանն ու հանցագործությունների հետագա կանխմանն ուղղված այլ միջոցառումներ: Մեծ ուշադրություն է հատկացվում հատկապես հասարակական աշխատանքներին դատապարտյալի ներգրավվածության վրա[1]:

Սակայն, պետք է արձանագրենք, որ ՀՀ դատարանների կողմից նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս, սահմանելով որոշակի ժամկետով փորձաշրջան, դատապարտյալների նկատմամբ, որպես կանոն, որևէ պարտականություն չի դրվում:

Եթե դիտարկենք եվրոպական երկրներում այս համակարգերի միտումները, ապա պետք է փաստենք, որ պատժի և արդարադատության իրականացումը գնում է դեպի այլընտրանքային պատժամիջոցների կիրառման ընդլայնում և անցնում վերականգնողական արդարադատության համակարգի: Հատկապես մեծ է Մեծ Բրիտանիայի դերն այս ոլորտում, որը համաշխարհային պրակտիկա-

յին առաջարկեց նոր ծառայություն՝ «Պրոբացիայի» ծառայությունը:

Թարգմանաբար՝ «Պրոբացիա» նշանակում է փորձության ժամանակաշրջան, կարճ՝ փորձաշրջան, որի վերաբերյալ առկա են տարբեր մոտեցումներ:

Որոշ հեղինակներ կարծում են, որ Պրոբացիայի էությունը դատավճռի ամբողջական կամ մասնակի կասեցումն է և դատապարտյալի ազատության մեջ մնալը՝ պրոբացիոն մարմնի վերահսկողության և հատուկ պայմանների առկայության պայմաններում[2]:

Ըստ մեկ այլ բնորոշման՝ «Պրոբացիան» լայն հասկացություն է, պատժի յուրահատուկ մեթոդ, որը հիմնվում է սոցիալ-մանկավարժական սկզբունքների վրա, և բնութագրվում է դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն սահմանելու և օգնություն տրամադրելու համակցությամբ:

Հաջորդ մոտեցման համաձայն՝ «Պրոբացիան» ազատ համակարգ է, որը կիրառվում է այն իրավախախտների նկատմամբ, ովքեր առանձնանում են իրենց քրեական անհատականությամբ, կատարված հանցանքի բնույթով, գործող համակարգի նկատմամբ ունեցած վերաբերմունքով, որի նպատակը նրանց փոխվելու և սոցիալական միջավայրում իրենց տեղը գտնելու հնարավորություն տալն է[3]:

Այնուամենայնիվ, «Պրոբացիա» հասկացության իրավական բացատրությունը տրվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից՝ ԵՄ անդամ պետություններին ուղղված 2010/1 առաջարկությամբ, համաձայն որի՝ Պրոբացիան վերաբերում է հանցագործություն կատարած անձանց նկատմամբ նշանակված պատիժների ու միջոցների կատարմանը և ներառում է մի շարք գործողություններ ու միջամտություններ, որոնց թվում են վերահսկողությունը, ուղղորդումն ու աջակցությունը՝ ուղղված հանցագործություն կատարած անձի վերասոցիալականացմանը, ինչպես նաև հանրային անվտանգության ապահովմանը[4]:

Տարբեր երկրներում պրոբացիոն ծառայության հիմնադրման և զարգացման հետ միասին Պրոբացիայի ծառայություններն ընդլայնել են իրենց լիազորությունները՝ ընդգրկելով նոր գործառույթներ՝ սկսած այլընտրանքային պատիժների կատարումից և մեղիացիայից մինչև քրեական գործերով մինչդատական վարույթի ընթացքում կալանավորմանն այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների կիրառման ապահովումը (հսկողության հանձնելը, տնային կալանքը): Տնային կալանքի կատարման ընթացքում հանցագործություն կատարած անձանց աջակցության, օժանդակության գործառույթներ են նախատեսվում հատկապես Դանիայում, Իտալիայում, Նորվեգիայում, Շոտլանդիայում և Սլովենիայում[5]:

Ինչպես պրոբացիոն ծառայությանը վերաբերող այլ հստակեցումները, այնպես էլ ծառայությունների գործունեության հիմնարար սկզբունքներն ամրագրված են ԵՄ անդամ պետություններին ուղղված և վերը հիշատակված առաջարկությամբ[6]:

Այդ առաջարկությունը սահմանում է պրոբացիոն ծառայությունների հիմնարար հետևյալ սկզբունքները.

1. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների նպատակը կրկնահանցագործությունը կրճատելն է՝ հանցագործություն կատարած անձի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու միջոցով, նրանց վերահսկելու (ներառյալ՝ հարկ եղած դեպքում հսկելու), ուղղորդելու ու աջակցելու և նրանց բարեհաջող սոցիալական ներգրավումը խթանելու նպատակով: Պրոբացիան, ուստի, նպաստում է հանրային անվտանգությանը և արդարադատության պատշաճ իրականացմանը.

2. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է հարգեն հանցագործություն կատարած անձանց իրավունքները:

Դրանց բոլոր միջամտությունների դեպքում պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեն նրանց արժանապատվությունը, առողջությունը, անվտանգությունն ու բարեկեցությունը.

3. բոլոր դեպքերում, երբ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները զբաղվում են հանցագործությունից տուժած անձանց վերաբերող հարցերով, պետք է հարգվեն նրանց իրավունքներն ու կարիքները.

4. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է ամբողջությամբ հաշվի առնեն հանցագործություն կատարած անձանց անհատական առանձնահատկությունները, պայմանները և կարիքները ապահովելու համար, որպեսզի յուրաքանչյուր դեպքում ցուցաբերվի արդարացի և համարժեք վերաբերմունք: Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների միջամտությունները պետք է իրականացվեն՝ բացառելով խտրականությունը որևէ հիմքով ինչպես, օրինակ՝ սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, հաշմանդամությունը, սեռական կողմնորոշումը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային կամ սոցիալական ծագումը, էթնիկ փոքրամասնությանը պատկանելիությունը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավի-

ճակը.

5. որևէ պատժի կամ միջոցի կատարման ժամանակ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները հանցագործություն կատարած անձին չպետք է ծանրաբեռնեն կամ սահմանափակեն նրա իրավունքներն ավելի, քան նախատեսված է դատական կամ վարչական մարմնի որոշմամբ և պահանջվում է յուրաքանչյուր առանձին դեպքում՝ կախված հանցագործության ծանրությունից կամ կրկնահանցագործության՝ պատշաճ կերպով գնահատված ռիսկից.

6. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները, հնարավորինս պետք է ձգտեն հանցագործություն կատարած անձանց տեղեկացված համաձայնությունը ստանալուն և համագործակցությանը՝ նրանց առնչությամբ կատարվող միջամտության կապակցությամբ.

7. մեղքի վերջնական հաստատմանը նախորդող ցանկացած միջամտության համար պետք է պահանջվի հանցագործություն կատարած անձանց տեղեկացված համաձայնությունը, և այդպիսի միջամտությունը չպետք է հակասի անմեղության կանխավարկածին.

8. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները, դրանց խնդիրներն ու պարտականությունները, ինչպես նաև պետական մարմինների և այլ մարմինների հետ հարաբերությունները պետք է սահմանվեն ազգային իրավունքով.

9. պետական մարմինները պետք է շարունակեն պատասխանատվություն կրել պրոբացիայի համար նույնիսկ այն դեպքում, երբ ծառայությունները մատուցվում են այլ մարմինների կամ կամավորների կողմից.

10. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների համար պետք է ապահովվեն համապատասխան հեղինակություն, ճանաչում և ռեսուրսներ.

11. որոշում կայացնող մարմինները հարկ եղած դեպքում պետք է դիմեն դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններին, որպեսզի վերջիններս, կրկնահանցագործությունը նվազեցնելու և ազատությունից զրկելու այլընտրանքների կիրառումը խթանելու նպատակով, տրամադրեն մասնագիտական խորհրդատվություն և իրականացնեն վերահսկողություն.

12. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է համագործակցեն այլ պետական կամ մասնավոր կազմակերպությունների և տեղական համայնքների հետ՝ հանցագործություն կատարած անձանց սոցիալական ներգրավումը խթանելու նպատակով: Հանցագործություն կատարած անձանց համալիր կարիքները բավարարելու և հանրային անվտանգությունը ամրապնդելու համար անհրաժեշտ է կատարել համակարգված ու լրացուցիչ միջգերատեսչական և միջոլորտային աշխատանք.

13. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից ձեռնարկվող բոլոր գործողություններն ու միջամտությունները պետք է համապատասխանեն ազգային և միջազգային էթիկական ու մասնագիտական ամենաբարձր չափանիշներին.

14. անհրաժեշտ է ունենալ պրոբացիոն գործունեությանը կապված բողոքարկման մատչելի, անկողմնակալ և արդյունավետ ընթացակարգեր.

15. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է ենթարկվեն պարբերական պետական ստուգումների և (կամ) անկախ դիտանցման.

16. իրավասու մարմինները պետք է բարձրացնեն պրոբացիոն աշխատանքների արդյունավետությունը՝ խթանելով հետազոտական աշխատանքները, որոնք պետք է օգտագործվեն ուղղորդելու պրոբացիոն քաղաքականությունը և պրակտիկան.

17. իրավասու մարմինները և դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է տեղեկացնեն լրատվամիջոցներին և լայն հասարակությանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների աշխատանքի մասին՝ հասարակությունում նրանց դերի և արժեքի մասին առավել լավ պատկերացման ձևավորումը խթանելու նպատակով:

Ներկայումս՝ 2018 թվականի հունվարի 1-ից, ամբողջովին գործում է «Պրոբացիայի մասին» 2016 թվականի մայիսի 17-ին ընդունված օրենքը, որը կարգավորում է պրոբացիայի նպատակները, խնդիրները, սկզբունքները, կազմակերպման և գործունեության հիմունքները, այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, անվտանգության միջոցների, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջան նշանակելու, պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացման և խորհրդատվական զեկույցի տրամադրման կարգի, պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ իրականացվող պրոբացիայի առանձնահատկությունների, ինչպես նաև պրոբացիայի

պետական ծառայության (այսուհետ՝ Պրոբացիայի ծառայության) գործունեության հետ կապված հարաբերությունները, որոնք, սակայն գործնականում ամբողջությամբ չեն իրագործվում՝ քրեադատավարական օրենսդրության և անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության բացակայության պատճառով:

Պրոբացիայի ծառայության ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև մասնագիտական գիտելիքների հիման վրա այնպիսի գործառույթների կատարումն ապահովելու նպատակով, ինչպիսիք են դատարանների կողմից պատժի նշանակման փուլում և անկախ հանձնաժողովների կողմից անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ անձի պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը լուծելիս դատապարտյալի սոցիալ-հոգեբանական բնութագրի վերաբերյալ եզրակացության ներկայացումը, ինչը կնպաստի առավել արդարացի պատժաչափի նշանակման կամ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ առավել ճիշտ որոշման կայացմանը:

Պրոբացիայի ծառայության լիազորությունների և գործառույթների շրջանակը պետք է ընդգրկի՝

ա) մինչդատական փուլում՝ մինչդատական զեկույցի պատրաստում և կալանավորմանն այլընտրանք խափանման միջոցներից՝ տնային կալանքի և հսկողության իրականացում,

բ) դատական փուլում՝ մինչև պատժի նշանակումը զեկույցի տրամադրում և մեդիացիա,

գ) պենիտենցիար փուլում՝ այլընտրանքային պատիժների կատարում, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում՝ փորձաշրջանի կազմակերպում և իրականացում, վերականգնողական աշխատանքներ, պատժից ազատված անձի վարքի վերահսկողություն, պատիժը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողություն, ազատազրկման տեսքով պատժի կրման ընթացքում պատժի անհատական պլանավորմանը աջակցություն,

դ) հետպենիտենցիար փուլում՝ դատվածությունը հանելու առնչությամբ որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմնին զեկույցի ներկայացում:

Հիմք ընդունելով ԵՄ նախարարների խորհրդի Պրոբացիայի եվրոպական կանոնների վերաբերյալ հանձնարարականը («European Probation Rules», 2010 թ.)՝ Պրոբացիայի ծառայության առաքելությունն է՝ նպաստել արդար դատաքննությանը, ինչպես նաև հասարակական անվտանգությանը՝ կանխարգելելով և նվազեցնելով հանցագործությունները:

Հուսով ենք, որ առաջիկայում կլրացվեն ինչպես քրեական դատավարական օրենսդրությունը, այնպես էլ՝ Պրոբացիայի ծառայության համապատասխան տեխնիկական հագեցվածությունը՝ կապված, հատկապես, կալանավորման այլընտրանքային խափանման միջոցների ներդրման ու կիրառության, ինչպես նաև՝ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նկատմամբ վերահսկողության առավել արդյունավետ իրականացման հետ:

[1] Recommendation CM/Rec (2010) 1 CM of CoE.
[2] Handbook on Probation Services: Guidelines for Probation Practitioners and Managers. United Nations Interregional Crime and Justice Research Institute, Jon Klaus, 1998.
[3] Cartledge et al. 1981, in Harris 1995, էջ 3-4.
[4] Recommendation CM/Rec (2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules.
[5] http://www.cepprobation.org/uploaded_files/1_Chapter_1_Comparative_overview.pdf.
[6] Recommendation CM/Rec(2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules.

Паргев Оганян
кандидат юридических наук

РЕЗЮМЕ

Контроль над условным неприменением наказания (пробация)

В настоящей научной статье автор обратился к Службе пробации, основным проблемам законодательства и Службы пробации, проанализировал и выявил актуальные проблемы, законодательные пробелы и неполноценная техническая оснащенность Службы пробации в правоприменяющей практике, связанная, в частности, с внедрением и применением альтернативных мер пресечения ареста, а также более эффективным осуществлением контроля по отношению условного неприменения назначенного наказания.

В статье описывается необходимость создания Службы пробации, рамка необходимых полномочий и функций последней, такие как – представление заключения относительно социально-психологической характеристики осужденного, составление досудебного отчета на досудебных стадиях, исполнение и контроля альтернативной меры пресечения в виде домашнего ареста, предоставление отчета до назначения наказания на судебной стадии и медиация, и др.

Ключевые слова: *пробация, служба пробации, условное неприменение наказания, составление досудебного отчета, альтернативная мера пресечения, домашний арест, осуществление контроля, отчет, медиация.*

Pargev Ohanyan
Candidate of Legal Sciences

SUMMARY

Control over conventional non-application of punishment (probation)

In this academic article the author returned to Probation service, main problems of legislation and Probation service, analyzed and revealed actual problems, legislative vacuum and incomplete technical equipment the Probation service in law enforcement practice, connected, mainly, with introduction and application of alternative restrictive measures of arrest, as well as more efficient control over conventional non-application of the imposed punishment.

Necessity to establish Probation service, the frame of the required powers and functions of the latter, such as submission of conclusion on social-psychological characteristics of the convicted, drawing up of a pre-trial report at pre-trial stages, application of and control over alternative restrictive measure of arrest in the form of house arrest, submission of report before imposition of punishment on judicial stage and mediation, etc. are described in the article.

Key words: *Probation, Probation service, conventional non-application of punishment, drawing up of pre-trial report, alternative restrictive measure, home arrest, control, report, mediation.*